

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ Հ.2/5
ԵՐԵՎԱՆԻ ԱՎԱԳԱՆՈՒ ԵՐԿՐՈՐԴ ՆՍՏԱՇՐՋԱՆԻ ՀԻՆԳԵՐՈՐԴ ՆԻՍՏԻ

Ք. Երևան
Ժ.11.00

02 դեկտեմբերի 2009թ.

Մասնակցում էին՝

Երևանի ավագանու 44 անդամներ

Նիստը վարում էր Երևանի քաղաքապետ Գագիկ Բեգլարյանը:

ՕՐԱԿԱՐԳ

1. Օրակարգի նախագծի հաստատում:
2. Երևան քաղաքի ավագանու 2009 թվականի հուլիսի 6-ի N3-Ա որոշման մեջ փոփոխություններ և լրացում կատարելու մասին:
3. Տեղական տուրքերի և վճարների 2010 թվականի դրույքաչափերը սահմանելու մասին:
4. Երևան քաղաքի մի շարք տարածքների գոտիավորման նախագծերի հաստատման մասին:
5. Երևան քաղաքի վարչական սահմաններում գտնվող անշարժ գույքի և դրան հարակից ընդհանուր օգտագործման տարածքի պարտադիր բարեկարգման կարգը սահմանելու մասին:

ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ – Արման Վարդանյանը, Գուրգեն Գասպարյանը և Պողոս Փլավյանը:

1. ԼՄԵՑԻՆ – Օրակարգի նախագծի հաստատման մասին:

ՈՐՈՇՎԵՑ – Հաստատել 02.12.2009թ. Երևանի ավագանու նիստի օրակարգը:

ՔՎԵԱՐԿՈՒԹՅՈՒՆ – կողմ - 44
դեմ - 0
ձեռնպահ - 0

Որոշումն ընդունվեց միաձայն

2. ԼՄԵՑԻՆ – Երևան քաղաքի ավագանու 2009 թվականի հուլիսի 6-ի N3-Ա որոշման մեջ փոփոխություններ և լրացում կատարելու մասին:

ՈՐՈՇՎԵՑ – 1. Երևան քաղաքի ավագանու 2009 թվականի հուլիսի 6-ի «Երևանի քաղաքապետարանի աշխատակազմ» համայնքային կառավարչական հիմնարկ ստեղծելու, Երևանի քաղաքապետարանի և Երևանի վարչական շրջանի ղեկավարի աշխատակազմերի կանոնադրությունները, դրանց կառուցվածքն ու հաստիքացուցակը հաստատելու մասին» N3-Ա որոշման 2-րդ կետի «դ» ենթակետով հաստատված N4 հավելվածում՝ Երևանի քաղաքապետարանի (այդ թվում աշխատակազմի կառուցվածքային և առանձնացված

ստորաբաժանումներին) 2009թ. հաստիքային ցուցակում (այսուհետ՝ Հաստիքային ցուցակ), կատարել հետևյալ փոփոխությունները.

1. Հաստիքային ցուցակի «Ղեկավարություն» գլուխը շարադրել նոր խմբագրությամբ համաձայն հավելված 1-ի /կցվում է/:

2. Հաստիքային ցուցակի «Կառուցվածքային ստորաբաժանումներ» բաժնի «Ֆինանսական վարչություն» գլուխը շարադրել նոր խմբագրությամբ՝ համաձայն հավելված 2-ի /կցվում է/:

3. Հաստիքային ցուցակի «Առանձնացված ստորաբաժանումներ» բաժնի «Երևանի վարչական շրջանների աշխատակազմեր» գլխի «Քանաքեռ-Զեյթուն վարչական շրջանի ղեկավարի աշխատակազմ» կետի «Ֆինանսական բաժին» ենթակետը շարադրել նոր խմբագրությամբ՝ համաձայն հավելված 3-ի /կցվում է/:

4. Հաստիքային ցուցակի «Առանձնացված ստորաբաժանումներ» բաժնի «Քանաքեռ-Զեյթուն վարչական շրջանի ղեկավարի աշխատակազմ» գլխի «ԱՄԲՈՂԶԸ» տողի «Ընդամենն ամսական աշխատավարձը» սյունակի «12840.0» թիվը փոխարինել «12860.0» թվով:

5. Հաստիքային ցուցակի «ԱՄԲՈՂԶԸ՝ Երևանի քաղաքապետարան» տողի «Միավորների քանակը» սյունակի «350» և «Ընդամենն ամսական աշխատավարձը» սյունակի «48208.00» թվերը փոխարինել համապատասխանաբար «355» և «49083.00» թվերով:

6. Հաստիքային ցուցակի «Առանձնացված ստորաբաժանումներ» բաժնի «Երևանի վարչական շրջանների ղեկավարների աշխատակազմեր» գլխի «Ամբողջ՝ վարչական շրջաններ» տողի «Ընդամենն ամսական աշխատավարձը» սյունակի «150315.00» թիվը փոխարինել «150335.00» թվով:

7. Հաստիքային ցուցակի վերջում «ԱՄԲՈՂԶԸ» տողի «Միավորների քանակը» սյունակի «1934» և «Ընդամենն ամսական աշխատավարձը» սյունակի «218810.09» թվերը փոխարինել համապատասխանաբար «1939» և «219705.09» թվերով:

ՔՎԵԱՐԿՈՒԹՅՈՒՆ – կողմ – 44
դեմ – 0
ձեռնպահ – 0

Որոշումն ընդունվեց միաձայն

3. **ԼՄԵՑԻՆ** – Տեղական տուրքերի և վճարների 2010 թվականի դրույքաչափերը սահմանելու մասին:

ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ – Նաիրա Նահապետյանը և Պողոս Փլավյանը:

ՈՐՈՇՎԵՑ – 1. Սահմանել Երևան քաղաքում տեղական տուրքերի և վճարների 2010 թվականի հետևյալ դրույքաչափերը՝

1) Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով հաստատված ճարտարապետաշինարարական նախագծին համապատասխան՝ նոր շենքերի, շինությունների (ներառյալ՝ ոչ հիմնական) շինարարության (տեղադրման) թույլտվության համար տեղական տուրքը սահմանվում է՝

հիմնական օբյեկտների համար՝

ա. մինչև 300 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող անհատական բնակելի, այդ թվում՝ այգեգործական (ամառանոցային) տների, ինչպես նաև մինչև 200 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հասարակական և արտադրական նշանակության օբյեկտների համար՝ 75.000 դրամ.

բ. սույն կետի «ա» ենթակետով չնախատեսված օբյեկտների համար՝

բա. 201-ից մինչև 500 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող օբյեկտների համար՝ 150.000 դրամ,

բբ. 501-ից մինչև 1000 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող օբյեկտների համար՝ 250.000 դրամ,

բգ. 1001 և ավելի քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող օբյեկտների համար՝ 350.000 դրամ.

ոչ հիմնական շինությունների տեղադրման համար՝

գ. մինչև 20 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող օբյեկտների համար՝ 15.000 դրամ.

դ. 20 և ավելի քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող օբյեկտների համար՝ 25.000 դրամ:

2) Երևան քաղաքի վարչական տարածքում շենքերի, շինությունների, քաղաքաշինական այլ օբյեկտների վերակառուցման, ուժեղացման, վերականգնման, արդիականացման, աշխատանքների (բացառությամբ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված շինարարության թույլտվություն չպահանջող դեպքերի) համար, եթե սահմանված կարգով հաստատված ճարտարապետաշինարարական նախագծով՝

ա. չի նախատեսվում կցակառույցների, վերնակառույցների, շենքի գաբարիտային չափերն ընդլայնող այլ կառույցների (այդ թվում՝ ստորգետնյա) հետևանքով օբյեկտի ընդհանուր մակերեսի ավելացում կամ շենքերի գործառական նշանակության փոփոխություն, տեղական տուրքը սահմանվում է՝ 15.000 դրամ.

բ. բացի օբյեկտի վերակառուցման, ուժեղացման, վերականգնման կամ արդիականացման աշխատանքներից, նախատեսվում է նաև կցակառույցների, վերնակառույցների, շենքի գաբարիտային չափերն ընդլայնող այլ կառույցների (այդ թվում՝ ստորգետնյա) հետևանքով օբյեկտի ընդհանուր մակերեսի ավելացում կամ շենքերի գործառական նշանակության փոփոխություն, սպա, բացի սույն որոշման 1-ին կետի 2-րդ ենթակետի "ա" պարբերությամբ սահմանված դրույքաչափի, կիրառվում են նաև նոր շինարարության համար սույն որոշման 1-ին կետի 1-ին ենթակետով սահմանված նորմերը՝ օբյեկտի ընդհանուր մակերեսի ավելացման կամ շենքերի գործառական նշանակության փոփոխության մասով.

գ. նախատեսվում է միայն կցակառույցների, վերնակառույցների, շենքի գաբարիտային չափերն ընդլայնող այլ կառույցների (այդ թվում՝ ստորգետնյա) շինարարություն կամ շենքերի գործառական նշանակության փոփոխություն, սպա, սույն որոշման իմաստով, այն համարվում է նոր շինարարություն, որի նկատմամբ կիրառվում են նոր շինարարության համար սույն որոշման 1-ին կետի 1-ին ենթակետով սահմանված նորմերը:

3) Երևան քաղաքի վարչական տարածքում շենքերի, շինությունների, քաղաքաշինական այլ օբյեկտների քանդման թույլտվության համար տեղական տուրքը սահմանվում է՝ 25.000 դրամ:

4) Երևան քաղաքի վարչական տարածքում ոգելից խմիչքի վաճառքի թույլտվության համար՝ հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում՝ յուրաքանչյուր եռամսյակի համար՝ ըստ գոտիավորման, տեղական տուրքը սահմանվում է համաձայն N 1 հավելվածի /կցվում է/:

5) Երևան քաղաքի վարչական տարածքում ծխախոտի արտադրանքի վաճառքի թույլտվության համար՝ հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում՝ յուրաքանչյուր եռամսյակի համար՝ ըստ գոտիավորման, տեղական տուրքը սահմանվում է համաձայն N 2 հավելվածի /կցվում է/:

6) Երևան քաղաքի վարչական տարածքում՝

ա. բացօթյա առևտուր կազմակերպելու թույլտվության համար տեղական տուրքը սահմանվում է յուրաքանչյուր օրվա համար՝ 500 դրամ.

բ. հեղուկ վառելիքի, տեխնիկական հեղուկների, հեղուկացված գազերի մանրածախ առևտրի կետերում հեղուկ վառելիքի, տեխնիկական հեղուկների, հեղուկացված գազերի վաճառքի թույլտվության համար տեղական տուրքն ընթացիկ տարվա համար սահմանվում է՝ 350. 000 դրամ:

7) Երևան քաղաքի վարչական տարածքում թանկարժեք մետաղներից պատրաստված իրերի մանրածախ առուվաճառքի համար՝ յուրաքանչյուր տարվա թույլտվության համար տեղական տուրքը սահմանվում է՝ 50.000 դրամ:

8) Երևան քաղաքի վարչական տարածքում՝ առևտրի, հանրային սննդի, զվարճանքի, շահումով խաղերի և վիճակախաղերի կազմակերպման օբյեկտները, բաղնիքները (սաունաները), խաղատները ժամը 24.00-ից հետո աշխատելու թույլտվության համար՝ տեղական տուրքը ընթացիկ տարվա համար սահմանվում է՝

ա. առևտրի օբյեկտների համար՝ 87.500 դրամ.

բ. հանրային սննդի և զվարճանքի օբյեկտների համար՝ 175.000 դրամ.

գ. բաղնիքների (սաունաների) համար՝ 875.000 դրամ.

դ. խաղատների կազմակերպման համար՝ 1.750.000 դրամ.

ե. շահումով խաղերի կազմակերպման համար՝ 875.000 դրամ.

զ. վիճակախաղերի կազմակերպման համար՝ 262.000 դրամ:

9) Համաքաղաքային կանոններին համապատասխան Երևան քաղաքի վարչական տարածքում ընտանի կենդանիներ պահելու թույլտվության համար՝ տեղական տուրքն ընթացիկ տարվա համար սահմանվում է 5000 դրամ:

10) Երևան քաղաքի վարչական տարածքում յուրաքանչյուր ամսվա համար արտաքին գովազդ տեղադրելու թույլտվության համար մեկ քառակուսի մետրի տեղական տուրքը, ըստ գոտիավորման, սահմանվում է՝

ա. ալկոհոլային սպիրտի պարունակությունը մինչև 20 ծավալային տոկոս արտադրանք գովազդող արտաքին գովազդի համար՝

- Աջափնյակ, Ավան, Գավթաշեն, Էրեբունի, Նոր Նորք, Նորք-Մարաշ, Նուբարաշեն, Շենգավիթ և Քանաքեռ-Զեյթուն վարչական շրջանների տարածքում՝ 2500 դրամ.

- Մալաթիա-Սեբաստիա վարչական շրջանի տարածքում՝ 3000 դրամ.

- Արաբկիր և Կենտրոն վարչական շրջանների տարածքում՝ 3500 դրամ.

բ. թունդ ալկոհոլային (սպիրտի պարունակությունը 20 և ավելի ծավալային տոկոս) արտադրանք գովազդող արտաքին գովազդի համար՝

- Աջափնյակ, Ավան, Գավթաշեն, Էրեբունի, Նոր Նորք, Նորք-Մարաշ, Նուբարաշեն, Շենգավիթ և Քանաքեռ-Զեյթուն վարչական շրջանների տարածքում՝ 3500 դրամ.

- Մալաթիա-Սեբաստիա վարչական շրջանի տարածքում՝ 3500 դրամ.

- Արաբկիր և Կենտրոն վարչական շրջանների տարածքում՝ 6125 դրամ.

գ. այլ արտաքին գովազդի համար՝

- Աջափնյակ, Ավան, Գավթաշեն, Էրեբունի, Նոր Նորք, Նորք-Մարաշ, Նուբարաշեն, Շենգավիթ և Քանաքեռ-Զեյթուն վարչական շրջանների տարածքում՝ 2000 դրամ.

- Մալաթիա-Սեբաստիա վարչական շրջանի տարածքում՝ 2200 դրամ.

- Արաբկիր և Կենտրոն վարչական շրջանների տարածքում՝ 2625 դրամ.

դ. դատարկ գովազդային վահանակների համար՝ 1225 դրամ.

11) Երևան քաղաքի արխիվից փաստաթղթերի պատճեններ և կրկնօրինակներ տրամադրելու համար տեղական տուրքը ընթացիկ տարվա համար սահմանվում է 10000 դրամ:

12) Երևան քաղաքի վարչական տարածքում մարդատար տաքսու (բացառությամբ երթուղային տաքսիների) ծառայություն իրականացնելու թույլտվության համար տեղական տուրքն ընթացիկ տարվա համար սահմանվում է 10000 դրամ:

13) Համայնքի տարածքում շինարարության կամ շինության արտաքին տեսքը փոփոխող վերակառուցման աշխատանքներ կատարելու հետ կապված տեխնիկատնտեսական պայմաններ մշակելու և հաստատելու, ավարտված շինարարության շահագործումը փաստագրելու համար տեղական վճարը սահմանվում է՝

ա. մինչև 500 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող օբյեկտների համար՝ յուրաքանչյուր քառակուսի մետր մակերեսի համար՝ 1000 դրամ.

բ. 501 քառակուսի մետրից սկսած 500.000 դրամ գումարած յուրաքանչյուր ավել 1 քառակուսի մետրի համար՝ 500 դրամ, բայց ոչ ավելի քան 1.000.000 դրամ:

14) Համայնքի տնօրինության և օգտագործման տակ գտնվող հողերը հատկացնելու, հետ վերցնելու և վարձակալության տրամադրելու դեպքում անհրաժեշտ չափագրական և այլ նման աշխատանքների համար տեղական վճարը սահմանվում է՝

ա. մինչև 500 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հողամասերի համար՝ յուրաքանչյուր քառակուսի մետր մակերեսի համար՝ 500 դրամ.

բ. 501 քառակուսի մետրից սկսած 500.000 դրամ գումարած յուրաքանչյուր ավել 1 քառակուսի մետրի համար՝ 250 դրամ, բայց ոչ ավելի, քան 750.000 դրամ:

15) Համայնքի կողմից մրցույթներ և աճուրդներ կազմակերպելու հետ կապված ծախսերի փոխհատուցման համար տեղական վճարը սահմանվում է՝ յուրաքանչյուր մասնակցից 10.000 դրամ:

ՔՎԵԱՐԿՈՒԹՅՈՒՆ – կողմ - 32
դեմ – 0
ձեռնպահ – 12

Որոշումն ընդունվեց ձայների մեծամասնությամբ

4. ԼՍԵՑԻՆ – Երևան քաղաքի մի շարք տարածքների գոտիավորման նախագծերի հաստատման մասին:

ՈՐՈՇՎԵՑ – 1. Հաստատել՝

1) Երևան քաղաքի Շենգավիթ վարչական շրջանի տարածքի գոտիավորման նախագիծը՝ համաձայն N1 հավելվածի /կցվում է/:

2) Երևան քաղաքի Էրեբունի վարչական շրջանի սահմաններում առանձին տարածքի գոտիավորման նախագծի և առաջնահերթ շինարարության կառուցապատման տարածքների էսքիզների մշակման նախագիծը՝ համաձայն N2 հավելվածի /կցվում է/:

3) Երևան քաղաքի առանձին տարածքների գոտիավորման նախագծերի և առաջնահերթ շինարարության կառուցապատման էսքիզների մշակման նախագիծը՝ համաձայն N3 հավելվածի /կցվում է/:

ՔՎԵԱՐԿՈՒԹՅՈՒՆ – կողմ - 44
դեմ – 0
ձեռնպահ – 0

Որոշումն ընդունվեց միաձայն

5. ԼՍԵՑԻՆ – Երևան քաղաքի վարչական սահմաններում գտնվող անշարժ գույքի և դրան հարակից ընդհանուր օգտագործման տարածքի պարտադիր բարեկարգման կարգը սահմանելու մասին:

ՈՐՈՇՎԵՑ – 1. Սահմանել Երևան քաղաքի վարչական սահմաններում գտնվող անշարժ գույքի և դրան հարակից ընդհանուր օգտագործման տարածքի պարտադիր բարեկարգման կարգը՝ համաձայն հավելվածի /կցվում է/:

ՔՎԵԱՐԿՈՒԹՅՈՒՆ – կողմ - 44
դեմ – 0
ձեռնպահ – 0

Որոշումն ընդունվեց միաձայն

ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ

Գ. ԲԵԳԼԱՐՅԱՆ

Կազմեց՝
Ն. Ղուկասյան